ԹԵՄԱ 3 ԱՐԵՎԵԼՔԻ ԵՎ ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

§ 40. ՄՈՆՂՈԼԱԿԱՆ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԸ ԵՎ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ» ՏԵՐՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ

1

Պահում էին խոշոր եղջերավոր անասունների նախիրներ, ոչխարների անհամար հոտեր ու ձիերի երամակներ: Ապրում էին թաղիքե վրաններում՝ ***յուրտերում***, որոնք հեշտությամբ կարելի էր հավաքել և տեղափոխել: Երբ մի վայրից մյուսն էին քոչում, թվում էր, թե սայլերով մի ամբողջ բնակատեղի է շարժվում: Մոնղոլների յուրաքանչյուր տոհմ բարձր կարգապահությամբ օժտված ռազմական կազմակերպություն էր: «Հարազատներից հեռանալը նշանակում է դառնալ օտարի ավար»,– ասում է մոնղոլական ասացվածքը:

Մոնղոլական ցեղերը հաճախ էին ավարառուական հարձակումներ գործում հարևան Չինաստանի ու Միջին Ասիայի պետությունների վրա: Ներխուժումները կանխելու համար այդ երկրները մոնղոլական ցեղերին իրար դեմ գժտեցնում էին, երկպառակչական պատերազմներ հրահրում: Մոնղոլական ավագանին երազում էր այդ հարուստ երկրները նվաճելու և նրանց

հարստություններին տիրանալու մասին:

XII դարի վերջին մոնղոլների շրջանում տոհմատիրական կարգը սկսել էր քայքայվել, ձևավորվել էր ավագանին, որը տեր էր դարձել մեծաթիվ հոտերի և նախիրների: Կային չքավորներ՝ ***նուքերներ***, ովքեր աշխատում էին ավագանու համար, կային և ռազմագերի ստրուկներ: Ամեն առանձին տոհմի գլուխ կանգնած էին տոհմապետերը՝ ***նոյոնները***: Նոյոններն ունեին հեծյալ նետաձիգներից կազմված ռազմական ջոկատներ: Տոհմերը միավորված էին ցեղային միություններում:

2

Չինգիզ խանը ի հայտ բերեց զորավարի և կազմակերպչի մեծ ընդունակություններ: Նա միավորեց մոնղոլների ռազմական ուժերը և կազմակերպեց հզոր բանակ: Այն կազմված էր 10, 100, 1000 հեծյալ ռազմիկների ջոկատներից, որոնք զինված էին նիզակով, վահանով, սրով, նետ ու աղեղով: Բանակը ենթարկվում էր խստագույն կարգապահության, նահանջի, վախկոտության կամ այլ զանցանքի դեպքում ողջ ջոկատին սպասում էր մահապատիժ: Ամենախոշոր միավորը՝ թումենը, բաղկացած էր 10000 հեծյալից: Չինգիզ խանի զորքը կազմված էր մի քանի տասնյակ թումենից, ինչը շատ անգամ գերազանցում էր հարևան երկրների ամենաբազմամարդ բանակներին:

Կիրակոս Գանձակեցին մոնղոլների կողմից Լոռի քաղաքի ավերման մասին

Թշնամիները եկան փորեցին պարսպի տակ և փլեցրին այն, իսկ իրենք շուրջը նստած հսկում էին, որ ոչ ոք չփախչի: Երբ բնակիչները տեսան, որ քաղաքը գրավվեց, վախից սկսեցին լցվել ձորը: Այս տեսնելով՝ թշնամիները սկսեցին մտնել քաղաք և անխնա կոտորել տղամարդկանց, կանանց ու երեխաներին, ավար առնելով նրանց ինչքը և ունեցվածքը:

3

Մոնղոլ նվաճողներն աչքի էին ընկնում արտակարգ դաժանությամբ: Գրավված քաղաքների արական բնակչությանը կոտորում էին, կանանց և երեխաներին՝ վաճառում ստրկության: Խնայում էին միայն վարպետ արհեստավորներին, որոնց աշխատեցնում էին իրենց համար: Մոնղոլական արշավանքներից հետո Միջին Ասիայի ծաղկուն բնակավայրերից շատերը վերածվեցին անապատի:

Չինգիզ խանի հանձնարարությամբ 1321-1323 թթ. մոնղոլական 20000-անոց բանակը հեռախուզական արշավանք կատարեց

դեպի Արևմուտք: Ավերելով ու թալանելով հյուսիսային Իրանը, մոնղոլները ներխուժեցին Հարավային Կովկաս, ջախջախեցին հայ-վրացական միացյալ բանակը, թալանեցին Թիֆլիսը, Գանձակը և այլ քաղաքներ: Անցնելով Հյուսիսային Կովկաս և Ղրիմ, Կալկա գետի ճակատամարտում մոնղոլները ջախջախեցին պոլովցիների և ռուս իշխանների միացյալ զորքերը, որից հետո մեծ ավարով ու հարուստ տեղեկություններով վերադարձան Մոնղոլիա: Չինգիզ խանի մահը առժամանակ հետաձգեց մոնղոլների կողմից արևմտյան երկրների նվաճումը:

4

Բաթու խանի ուլուսը կոչվեց «Ոսկե հորդա»: Կենտրոնը Սարայ-Բաթուն էր Վոլգայի ափին: Սահմանները ձգվում էին Կարպատյան լեռներից մինչև Ուրալյան լեռները, Բալթիկ ծովից մինչև Կովկասյան լեռները:

Մինչ Բաթու խանի զորքերը հպատակեցնում էին Ռուսիան, մոնղոլական մեկ այլ բանակ գրավեց Իրանը, Իրաքը, Հարավային Կովկասը, Սիրիան, Փոքր Ասիայի մի մասը: Մոնղոլական զորքերը հասան մինչև Կիլիկիա և Միջերկրական ծով: Արաբական մշակույթի կենտրոն Բաղդադը ենթարկվեց կողոպուտի, բնակչությունը կոտորվեց, գրադարանները և արվեստի հուշարձանները ոչնչացվեցին:

Հուլաուի ուլուսը, որի մեջ մտնում էին Հայաստանը և ողջ Հարավային Կովկասը, ընդգրկում էր նաև Սիրիան, Իրաքը և Իրանի տարածքը: